

ՄԱՍԿ

Յարկան գինը 10 րուբլ, կես տարվանը 6 րուբլ:

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ:

Օտարաբաղադրացիք դիմում են ուղղակի
Тифлис. Редакция „Маск“

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւնները ընդունվում են ա մեն լ եղ ու ո լ

Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր բառին 2 կօպէկ:

ԲՈՎԱՆԻԱԿՈՒԹԻՒՆ

Նիւթական ապահովութիւն. — Ներքին տե-
սուծիւն, Նամակ հանազարից: Նամակ
Աստրախանից: Նամակ Խմբագրին: Ներքին
լուրեր: Արտաքին տեսուծիւն Վ. Պօլսի
ազգային ժողովի նիստը: Տեղեկութիւններ կա-
րէնց: Նամակ Թիֆլիսից: Արտաքին լու-
րեր: «Մշակ» հեռագրիւններ: Յայտարարու-
թիւններ: Տեղեկացոյց: Բանասիրական:
Հայրենագիտութեան դասախօսութեան եղա-
նակը:

ՆԻԹԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ

Երբ որ աշխատող մարդը ա-
նապահով դրութեան մէջ է, նա
միշտ դժգոհ է լինում: Եւ մեն
մարդուն յատուկ է ձգտել դէպի
իր և իր ընտանիքի նիւթական
ապահովութիւնը:

Արդեապէս հասարակութեան
մեծ մասը՝ սեփականութիւն չու-
նեցող, իրանց ձեռքի վաստակով
ապրող մարդիկ են:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ԴԱՍԱԽՈՍՈՒԹԻՒՆ
ԵՂԱՆԱԿԸ

(Դարձնակութիւն և վերջ)

Ինչնորոգ դասին ուսուցիչը խօսում է աշ-
կերաների հետ օդի մասին, Նա տեղեկութիւն
է տալիս, որ մենք ամեն կողմից շրջապատած
ենք օդով, մենք նրան չենք տեսնում, բայց
զգում ենք նորա մերձակայութիւնը քանի որ
մանակ և փորձով ցոյց է տալիս ամենայն դա-
տարկ բանի մէջ օդով վրէ լինելը: Պատմելով
օդի մէջ պատահող զանազան փոփոխութիւն-
ների մասին, ցոյց է տալիս աշակերտներին ջեր-
մաչափը և նորա միջի սնդիկը, բացատրում է
թէ ինչպէս նրանով իմանում են օդի սառնու-
թիւնը և տաքութիւնը, թէ քանի աստիճանի
վրա է լինում մեր բնակված տեղում ամենա-
շոգ և ամենացուրտ օրը: Խօսելով արեգակի եր-
կնքում ունեցած զանազան գիւրքի վրա, հետե-
ւանք է դուրս բերում, որ գիշերը օրվան ամենա-
ցուրտ, իսկ օրը ամենատաք մասն է, որ առա-
ւօտեան և երեկոյանը այնպէս տաք չեն,
ինչպէս կեսօրին, որ ձմեռը ամենացուրտ, իսկ
ամառը տաքիւն ամենատաք եղանակներն են
և ինչու աշունքը և գարունը ամառվան պէս
տաք և ձմեռվան պէս սառը չեն: Այնուհետեւ
խօսելով գոյրջու վրա, բուսքի չորանալը օրի-
նակ բերելով, հասկացողութիւն է տալիս ամպի,
անձրեւի, ձիւնի, ցօղի և եղիամրի, նոցա օգուտ-
ների ու վնասների և այն ներգործութեանց
վրա, որ ունեն նոցա օդի տաքութեան վրա:

Տասներորդ դասին ուսուցիչը իր թաշկինակը
թափ տալով դասատանը, խօսում է քամու, բու-
քի և մրրիկի յառաջանալու և օդի վրա ունեցած
նրանց ներգործութեան վրա, թէ ինչ են բերում
նոցա երբ փչում են հիւսիսից, հարաւից, արեւել-
քից և արեւմուտքից: Այնուհետեւ հետևանք է դուրս
բերում կլիմայի տեսակների, և նրանց փոփոխու-
թեանց վրա: Թէ ինչ օգուտ և վնասներ են տա-
լիս բոյսերին, անասուններին և մարդոց, թէ ինչ-
չի մեր ել վրում չեն բուսնում այն բոյսերը, որ

Ծանր է մի մարդու դրու-
թիւնը, լինէր նա առևտրական
գործակաւար, փորրիկ պաշտո-
նեայ, գործարանի բանուոր, կամ
ծառայ, երբ ամբողջ կիսնքը օրա-
կան աշխատանքով իրան և իր ըն-
տանիքը կերակրելուց յետոյ, ծե-
րութեան հասնելուն պէս, կամ
հիւանդութեան պատահած ժա-
մանակ տեսնում է որ ոչինչ չէ
կարողացել յետ գցել, չէ կարո-
ղացել ապահովել իրան և իր ըն-
տանիքը: Եւ ամբողջ կեանքը աշխա-
տելուց յետոյ, աշխատողը կրկին
աղքատ է մնում:

Եւս դրութեան մէջ պատա-
հում է որ աշխատողը անազնիւ է
դառնում, սկսում է իրան ապա-
հովել աններելի միջոցներով: Արա-
պի բռնած ընթացքը յուսահա-
տութեան հետևանք է:

Բուսնում են հիւսիսային երկրներում և բնդ-
հակառակը, թէ ինչ տպաւորութիւն և ներգոր-
ծութիւն ունի կլիման մարդկային կենցաղավա-
րութեան վրա և ինչից կախումն ունի կլիմայի
բարեխառնութիւնը և անբարեխառնութիւնը,
չորութիւնը և խոնավութիւնը: Այս դասին ու-
սուցիչը բերում է դասառուս այն պատկերը,
որոնք չեն բուսնում մեր երկրում կլիմայի աղա-
պէս լինելու պատճառով: Պատմում է քաղաքի
և նրա շրջակայքում եղած այգիների, նրանց
պտղաբերութեան ու պտուղների տեսակների
վրա:

Տասն և մէկերորդ դասին ուսուցիչը խօսում է
քաղաքի ընակիների որքանութեան և որ աղ-
գութեան ու կրօնի պատկանելու վրա, ար-
հեստների, մեծ վաճառականութեան, մանրա-
վաճառականութեան և նրանց բազմազան տեսակների
վրա: Համբարութեան, նրա նշանակութեան, ու-
նեցած օգուտի և կառավարութեան վրա: Վարան-
ցովի, Գրիբաեզովի և Վերայի խաչի արձաննե-
րի և նրանց նշանակութեան վրա: Թուրքիւն է
հայոց և օտարազգաց երեկելի եկեղեցիները,
թատրոնները, խմբագրութիւնները, ուսումնա-
րանները, թանգարանները և գրադարանները:
Հասկացողութիւն է տալիս մեր հոգեբարակա-
նութեան, հոգեւոր կառավարութեան, առաջնոր-
դութեան, յաջորդութեան Սինոդի և կաթողի-
կոսի վրա, մեր քաղաքի մայրաքաղաք կոչուելու
և կուսակալութեան վրա:

Տասներկուերորդ դասին ուսուցիչը տալիս է
աշակերտներին քաղաքից դուրս գտնված մի
որ և ինչ գիւղ, ցոյց է տալիս գիւղական խրճիթ-
ների աճակի զանազանութիւնը մեր քաղաքի
տներից, ուշադրութիւն է դարձնել տալիս այ-
գիների և ագարակների վրա: Պատմում է գիւ-
ղացիների կենսութիւնը, և նրանց այն օգուտների
մասին, որ ստանում են նրանց հողից, բոյսերից
և կենդանիներից: Ցոյց է տալիս երկրագործա-
կան բոլոր գործիքները և բացատրում է երկ-
րագործութեան և խաչնարածութեան բոլոր օ-
գուտները: Այնուհետեւ հասկացնում է՝ թէ ինչ
վնասներ են կրում գիւղացիները իրանց անդա-
ղիտութեան, թէ ինչպէս նրանց խաբում են գիւ-
ղի աղաները, գիւղական դատարանները և տա-
նուտները և թէ ինչ գիւղերը քաղաքից մո-
տիկ են չլինված: Հանապաճիկն գաղտի վերա-
յով անցնելիս—ուսուցիչը հասկացնում է դաշտի
ինչ լինելը և նշանակութիւնը, մարդագետնի մո-
տով անցնելիս—հասկացնում է մարդագետնի և

Օրական աշխատողի այդ դը-
րութեանց օգուտը քաղելով, գտն-
վում են մարդիկ, որոնք աշխա-
տողների շրջանում հասարակական
սխալ վարդապետութիւններ են
քարոզում, փոխանակ միջոցներ
որոնելու աշխատանքը ապահովե-
լու համար, գրգռում են աշխա-
տողին ունեւորների դէմ:

Նշմարիտ է մարդու անապա-
հով նիւթական դրութիւնը պատ-
ճառ է լինում չար մտածմունք-
ների, շատ անգամ յանցանքների:
Եւսապահով դրութեան մէջ գը-
տնվող մարդը միշտ հակումն ունի
կամ դէպի անազնիւ ճանապարհ-
ներով իրան ապահովելը, կամ
դէպի զանազան սխալ և վնասա-
կար հասարակական վարդապե-
տութիւնների ընդունելը:

Դորա դէմ գիտութիւնը առա-

արտատեղի նշանակութիւնները, թէ ինչի շատ
դաշտեր արգաւանդ են և շատերը ոչ, և թէ ինչ-
չով են պարարտացնում գաշտերը:

Աշակերտները գծագրում են գիւղական խրճիթի
մակարդակը և համեմատում են քաղաքի տան
մակարդակի հետ:

Տասն և երեքերորդ դասին ուսուցիչը խո-
սում է աշակերտներին թէ քաղաքի արեւելեան,
արեւմեան, հիւսիսային և հարաւային կողմերում
ինչ գիւղեր, գիւղաքաղաքներ և դաւառական
քաղաքներ կան: Ինչով են նոցա երեկելի և ինչ
հում արդիւնքներ ու նիւթեր արտադրվում են
նրանց մէջ, թէ որոնք նրանցից տանվում են
արտադասման և ինչ նիւթեր արտադասմանից
բերվում են մեր նահանգը, Այնուհետեւ ուսու-
ցիչը պատմում է քաղաքի բաղնիքների, Բօր-
ժօլի, Արասթումալի, Ուսաւէլի և Ասպնջայի
հանքային ջրերի և նրանց նշանակութեան և
կուրսերի ժամանակների վրա: Բնական և ար-
հեստական ջրերի յատկութեան ու օգուտների
վրա: Որոշել է տալիս մեր քաղաքի շրջակա-
քում գտնված գիւղերի, գիւղաքաղաքների և գա-
ւառական քաղաքների աշխարհագրական դիրքը
և հասկացնում է թէ ինչ է բլուրը, լեռը,
նրա կառույցը և ստորոտը:

Տասն և չորրորդ դասին ուսուցիչը տա-
նում է աշակերտներին երկաթուղու կապարանը,
ցոյց է տալիս չուկկառը և պոպոմու է թէ
ինչպէս այբան մարդիկ և ապրանքներ չոգիի դո-
րութեամբ կարողանում են հեռու և շատազ ճա-
նապարհորդութիւններ անել: Թէ ինչով երկա-
թուղին գերազանց է սուրհանդակութիւններից և
խնուկներից: Ինչ օգուտներ է տալիս նա վա-
ճառականութեանը և ինչ վնաս մանր ու սոոր
առևտրականներին: Բացատրում է քարածուխի
նշանակութիւնը, կազմութիւնը, տեսակները և
այն օգուտները, որ նա տալիս է կենցաղավա-
րութեան մէջ, թէ ինչպէս արժանի կը նստի մեր
տներին մէջ նրան բանացնելը, ինչպիսի վնաս-
րաններ պիտի ունենալ դորա համար և ինչով նա
գերազանց է փայտից: Վերադառնալիս նա ճա-
նապարհին ցոյց է տալիս մաքրատունը և պատ-
մում է նրա նշանակութիւնը:

Տասն և հինգերորդ դասին ուսուցիչը խո-
սում է անտառների և ջրերի մերձակայութեան
և հեռավորութեան երկրի վրա ունեցած ազդե-
ցութեան մասին, անտառներում և ծովերի վրա
պարտաւոր դատելի անձրեւների, կարկուտի, կայ-
ծակի և որոտմունքի մասին: Հասկացողութիւն

ձարվում է հետևեալ միջոցները՝
գիւղական և քաղաքային փոխա-
տու ընկերութիւններ, խնայողա-
կան դրամաբկղներ, աշխատող-
ների սպառողական և արդիւնա-
բերող ընկերութիւններ, մի խօս-
քով այն ամեն տեսակ ընկերակ-
ցութիւններ, որոնց միջոցով օրա-
կան աշխատողը, հասարակութեան
որ դասակարգին և պատկանէր
նա, կարող է հարկաւոր ժամա-
նակ նիւթական օգնութիւն ստա-
նալ, հիւանդութեան կամ ծերու-
թեան ժամանակ կարող է իրան
և իր ընտանիքը ապահովել:

Վեր առնենք, օրինակի հա-
մար, առևտրական գործակաւար-
ների դասը: Այսինքն շատ անգամ
մեղադրում են, որ նրանք իրանց
տէրերին հաւատարիմ չեն, աշխա-
տում են իրանց ապահովել անազ-

է տալիս ծովերի և լճերի վրա, Գեղայի և Սա-
լեանի ձկան մեծ առևտուրի մասին, նախ
Ջրօրների և երկրաշարժութեան պատճառների
վրա (առանց մանրամասնութեան մէջ մտնելու):
Պատմում է փոխաւոր բանկերի և խնայողական
դրամաբկղների նշանակութեան և կարևորու-
թեան վրա: Վերջում է աշխարհագրական քար-
տէզներ, բացատրում է նրանց, որ քարտէզ ստում
են մեծ տարածութեան մակարդակին, որի վրա
զանազան տեղերը նշանակված են պայմանա-
կան նշաններով: Այնուհետեւ ցոյց է տալիս թէ
ինչ պայմանական նշաններով նշանակվում են
քարտէզի վրա քաղաքները, գետերը, լեռները
և այլն:

Տասն և վեցերորդ դասին ուսուցիչը խօսում
է թէ ինչով է զանազանվում նախնական քա-
ղաքը գաւառականից, և գաւառական քաղաքը
գիւղից, թէ ինչ պարագմունքներ ունեն գիւղա-
ցիք և քաղաքացիք ամառը, ձմեռը, գարուն-
քին և աշունքին, թէ որ պետութեան ներքոյ
ենք գտնվում և ինչ է միապետական և հանրա-
պետական կառավարութիւնը, թէ ինչ է նախա-
րարութիւնը, ինչ տեսակների է բաժանված և
իւրաքանչիւրը ինչ մասերի վրա է հոգում և
այլն: Այնուհետեւ կարելի կը լինի սկսել աշխար-
հագրութեան գիտական դասերը:

Այսքան խօսելուց յետոյ, կարծում եմ, որ
շատ պարզ երևում է հայրենագիտութեան ուս-
մունքի պատրաստականութեան առարկայ լինելը
և այն կարևորութիւնը, որի մասին խօսեցի վե-
րել: Հայրենագիտութեան դասագիրքը չունե-
նախառն պատճառով, արդէն վերջացնելու վրա
եմ իմ սեփական «Հայրենագիտութիւն և սկզբ-
նական աշխարհագրութեան տարերք» անունով
դասագիրքը, որի տպագրութիւնը կարող է
սկսվել շուտով, եթէ նիւթական միջոցները նե-
րեն ինձ, որովհետեւ մակարդակների ձևերի քա-
ղակները այնքան գումար արժեն, որին կարօտ
է ամենայն հայ ուսուցիչ ինձ նման: Այս դա-
սագիրքը բաղկացած է քառասուն աւանդելի և
քառասուն փորձական դասերից:

Այս դասերը գրելիս, մասամբ օգուտ քաղեցի
զանազան հեղինակների տպագրութիւններից
և ցանկալի կը լինէր, եթէ մեր հայ ուսուցիչները
սրանց մէջ եղած զանազանութիւնները լրացնէին
հայրենագիտութեան առարկան դասախօսելու
ժամանակ:

Պօղոս Քաթանեանց

նիւ ճանապարհով: Բայց երևա-
կայեցէք ձեզ որ գործակատարը
վստոյ լինէր որ ունեւոր ընդհա-
նուր դրամարկը, իր հիւանդու-
թեան կամ ծերութեան ժամա-
նակ կը ստանայ այդ դրամարկ-
ընց ժամանակաւոր օգնութիւն,
կամ մշտական պէնսիա, — այն
ժամանակ նա հանդիստ կը լինի,
վստոյնութեամբ կը նայի հաս-
տոտ ապագայի վրա, կաշխատի
ազնիւ լինել որ արժանանայ ընդ-
հանուր գանձարանից օգնութիւն
ստանալուն:

Իսկ հոգու հանգստութիւնը,
ապագայի ապահովութիւնը ազ-
նուանող կերպով է սղոյում մար-
դուս վրա:

Նոյն երևոյթը նշմարվում է և
զանազան փոքրիկ պաշտօնեաների,
բանտորների և վերջապէս տան ծա-
ռանների վերաբերութեամբ: Մա-
նուանող վերջինների մասին ան-
դադար գանձարաններ են լրվում
մեզանում:

Նիւթական դրութիւնը ապա-
հովանող վերև յիշված ընկերակ-
ցութիւնները և ընդհանուր դրա-
մարկները փրկարար ներգործու-
թիւն կունենային աշխատող դասի
բարոյական զարգացման և դրու-
թեան վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵԱՀՆԱԶԱՐԻՑ

4 հոկտեմբերի

Կարգացի ձեր ազգասէր լրագրի 140 համարը,
որով խիստ գովում էիք Շահնազարի հասարակու-
թիւնը իրանց կալուածատէրերի հողերը գնելու
և իրանց սեփականացնելու համար, վստայնորոյ
կամենում եմ նկարագրել Շահնազարի գիւղը և
նրա ժողովրդի գաղթականութիւնը:

Շահնազար գիւղը Թիֆլիսի հարաւային կողմն
է, 80 վերստ հեռավորութեամբ, Ալեքսանդրա-
պոլի հիւսիսային կողմն է, այնտեղից էլ 50
վերստ հեռավորութիւն ունի, իսկ Զաւալօղլի
աւանտան կողմն է 20 վերստ հեռու: Շահնա-
զար գիւղը բաղկանում է 120 տնից և 1300 ան-
ձերից: Շահնազարի բնակիչները բոլորն էլ հայ-
կաթօլիկներ են և բնիկ աշաշկերացիներ, որոնք
1823 թիւն Հասան-խանի ժամանակը կողոպտ-
վեցան պարսիկներից և զուրկ ամեն ստացուածից
գաղթեցին և բնակվեցան Գուգարաց երկրի
լուռ նահանգի Շահնազար գիւղում, կարծե-
լով թէ այս երկիրը թաղաւորական տեղ է, բայց
1848 թիւն յայտնվեցաւ որ իշխան Օրբէլեան-
ների տեղ է եղել:

Շահնազարցի ունեցաւ իրան չորս հարկա-
հաններ, որոնց բռնակալութեանց և հարկապա-
հանչութեան շահնազարցի տուկաց ամբողջ 30
տարի, մինչև որ վարանցովի չինած պայմանագրի
երեսուն տարվայ ժամանակը լրացաւ: Առաջ տա-
րեկան հազար բոլոր էին վճարում կալուածատի-
րոջ, սկսեցին այնուհետ 3000 բոլոր պահանջել,
բայց շահնազարցի մտածեց որ այլ ևս կարելի չէ
տուկալ կալուածատէրերի սարսափելի պահանջ-
մանց, սկսեց իր հողերը գնել և իրան սեփա-
կանացնել: Վստայնորոյ 1877 թիւն գնեց 3154 գե-
սետարն գետին, դեսետարն 10 բոլորով, որ է
31570 բոլոր: 10,000 բոլոր վճարեցին դեկտեմ-
բեր ամսին, 10,000 բոլոր վճարեցին 1878

թիւ յուլիս ամսին: 11570 բոլոր ևս պէտք է
վճարեն առաջիկայ դեկտեմբեր ամսին: Բացի
այս շահնազարցի գնեց 951 դեսետարն դետին
Բեղալի միւս դետեր բաժինը, դեսետարն 11 բոլոր-
ով որի գինն է 10,461 բոլոր: Այդ գումարն էլ
պէտք է վճարեն երկու տարի ժամանակամիջո-
ցում, երեք տրեւում: Այժմ շահնազարցի ունի
իր սեփական հող 4108 դեսետարն, 600 դեսետարն
անտառ է երկու վերստ հեռավորութեամբ, 600
դեսետարն պաշտօնեղ է, 1000 դեսետարն ցա-
նելու տեղ է, իսկ մնացած դետինը արօտատե-
ղիք և լեռներ են:

Շահնազար գիւղը ունի չորս լաւ աղբիւրներ, և
երկու առուակներ, ունի երեք քարի հանք, մինը
սպիտակ և կակուղ միւսը կարմիր կակուղ քար
է, իսկ երրորդը կարծր դաշտալաղ է, (չախմախ
քար է): Ունի լաւ քերածի և կարմիր հողի
հանք կղմնաքար և հողի ամաններ չինելու հա-
մար:

Շահնազար գիւղը կառուցվել է մի բարձր լե-
ռան ստորոտի վրա, իր արեւելեան և հարաւային
կողմն ունի 2000 դեսետարն, կամ 100 վերստ
տարածութեամբ ընդարձակ մի դաշտ, որի մէջը
բնակված են վարանցովկացի մալականները, այս
դաշտի անունն է Տաշիր ձիւղի, այսինքն է
(տաշիաց դաշտ) որ և յիշատակւած է Ղա-
րախաչ և Չիպիւրու կոչված լեռների գոտինե-
րով:

Շահնազարի օղը ու ջուրը չառ բարեխառն է
և առողջարար: Սկսեցանք ցրտութիւնը քիւրմա-
չափի դեռօյից 4—5 աստիճան հաղիւ է
իջնում, իսկ ամառնային ջերմութիւնը 16—17
աստիճան հաղիւ թէ կը բարձրանայ. աղ-
բիւրների ջրերը բնականապէս ամառ ժամա-
նակ սառն են, իսկ ձմեռ ժամանակ ջրմ
հիւանդութիւն և վատառողջութիւն խիստ սա-
կաւ է, երկարակեաց անձինք չառ կան, թո-
ռան թոռն տեսնողներ չառ են, 10 հատի չափ
կինարմատներ կան, որոնք 100, 105 և 110
տարեկան են: Սովորութիւն ունենալ թէ աղայ և
թէ աղիկ 14—16 տարեկան պսակվելու, չառ
սակաւ կը պատահի որ 20 տարեկան պսակ-
վեն, բոլոր գիւղի մէջ մի աղայ կամ աղիկի չը
կայ անպակվել, մինչև անգամ կաղն ու կոյրն
էլ պսակվում են: Շահնազարի մէջ կայ երկու
եկեղեցի որոնք 5—6 հարիւր տարի է հիմն-
ված են, բայց շահնազարցի վերանորոգած են
փառաւորապէս և զարդարած կոփածու մեծա-
մեծ քարերով մինը գիւղի մէջտեղն է հասարա-
կաց մայր եկեղեցին, Ս. Յովնանէս Մկրտչի ա-
նուամբ, 1875 թիւն նորոգված և քիւրմաժող չին-
ված, 10 սաժէն երկայնութեամբ, 4 սաժէն լայ-
նութեամբ և երկու սաժէն բարձրութեամբ, իսկ
միւս եկեղեցին գիւղից դուրս գերեզմանատան
մէջն է, Աստուածածնի անուամբ, որը վերի վանք
էլ է կոչվում, մեծ ուխտատեղի է կոփածու քա-
րերով չինված 5 սաժէն երկայնութեամբ և 2
սաժէն լայնութեամբ ու բարձրութեամբ: Այս
տարի վարդապետի օրը 3000 ուխտաւորներ
եկան Շիրակի և Լուռի գաւառներից. ամեն ժա-
մանակ ուխտաւորներ անպակաւ են ամեն կող-
մերից և ամեն աղբերից:

Շահնազար գիւղն ունի մի ծխական ուսում-
նարան նոր հիմնված, աշակերտները հետողհետէ
հաւաքվում են. ուսումը ռուսերէն և հայերէն
լեզուներով պէտք է սովորեն և տարեկան 10
բոլոր վճարեն ուսումնարանին: Շահնազարցիները
վարձեցին իրանց ծխական ուսումնարանին համար
մի լաւ վարժապետ կառնիսկի գիմնադրայի վեցե-
րորդ դաստանից դուրս եկած, որը աղբով հայ-
կաթօլիկ է մականուամբ Պողոտ Շահպաղեան, որի
տարեկան վարձն է 300 բոլոր և 25 պոռք ալիւր:

Ս. Վ. Երանձեան

ՆԱՄԱԿ ԱՍՏՐԱԽԱՆԻՑ

8 հոկտեմբերի

Առեւտրական գործերի պատճառով քանի մի
տարի կենալով Աստրախանի մէջ և ծանօթա-
նալով այստեղի կենսի հետ կամենում եմ մի
քանի խօսք ասել քաղաքիս հասարակ դասի
կանանց կորստաբեր շահնազարցի մասին: Հա-
նուար կամ կիրակի օրերին մտի եկեղեցի,
բոլոր կանանց հագին կը տեսնես թաւի և մե-
տաքս, կարծում եմ բոլորն էլ հարուստ են. բայց
ինչ, նոցա մէջ մանրալիւծաւոր կին էլ կայ, կոշ-
կալարի և խանութի սպասաւորի կին էլ.
եթէ նրանց հետ ծանօթութիւն չունենաս, չես
կարող զանազան դասավարդի կանանց միմեան
ցից որոշել: Բայց արժանի էր տեղեկանալ, թէ
ինչերով են ձեռք բերվել այս թանկագին հա-

գուստները: Որը մարդու հետ կուգի է, անի-
ծել է նրան, հայտնի է, որը նստել ամբողջ օրե-
րով լաց է եղել, որն էլ ամիսներով խռովել է,
չէ խօսակցել իր ամուսնի հետ, մինչև որ իր
ուղածը ձեռք է բերել, իր նպատակին հասել է:
Հազար թող աղամարդը համոզէ, երբուէ, որ
չունի կարողութիւն այս ինչ 60 բոլորանոց մե-
տաքսայ հանդերձ, կամ այն ինչ 15 կամ 20
բոլորանոց բեղոյը գնելու, անկարելի է. կինը
մատնադոյց կանէ այս կամ այն վաճառականի
կնալ վրա, որ գնել է այս կամ այն զարդը.
թող խեղճ ամուսինը ակներև փաստերով
հաստատէ, թէ նա իրանից հարուստ է, կամ
թէ նրա գործերը այս տարի յաջող են, իսկ իր
գործերը անյաջող, կինը լսել անգամ չէ կամե-
նում, Գուցէ ոմանք կը մեղադրեն հարուստե-
րին, որպէս թէ նրանք են օրինակ դառնում ժո-
ղովրդի չուայութեանը. Ես համաձայն չեմ այս
մաքի հետ, որովհետեւ հարուստները համեմատա-
բար համեմատութեամբ են ապրում: Այն չքաւոր
մարդու կինը, որ դժուարութեամբ է ձարում իր
օրական չափովը, տարին առ սակաւն եօթը
կամ ութը անգամ հրաւէր է անում, պատճա-
ռելով այս մէկի նոր հարս լինելը, միւսի՝ ծնըն-
դաբերութեան տկարութենից առողջանալը,
երրորդի՝ հարսնական ընծայ ապրել, և այլն: Այլ
թէ ինչպիսի ճարպիկութեամբ են դառնում կանայք
այսպիսի կեղծ պատճառներ, ընկերցողը ինքն
քաջ գիտէ:

Անտարակոյս ամենայն մարդ այստեղ մատնա-
ցոյց կանէ դրա միակ պատճառի, այսինքն
անկրթութեան վրա, ես էլ կը վկայեմ, որ մեր կա-
նանց մեծ մասը անկրթ լինելով՝ նրանց ուրիշ
ոչինչ բան չէ գրաւում, եթէ ոչ ծծկեր մանուկի
նման արտաքին փայլողութիւնը: Բայց ինչ ա-
նենք, որ մեր ուսումնարանները չեն կրթում
մեր օրորդներին, չեն զարգացնում նոցա մտքե-
րը այնքան, որ գոնէ նոցա զիջեր-ցերեկ զար-
դարանքների վրա չը մտածէին, և այն իրենց
կենսի խորհուրդը չը համարէին. ինչ անենք, որ
մեր նոյն իսկ գիմնադրայում աւարտած օրորդ-
ները դուրս են գալիս այնտեղից, ոչ թէ իրենց
անկրթ լինելով ջորիներ համեստութեան և չափաւո-
րութեան օրինակ դառնալու համար, այլ մոտում
են կենսի մէջ աւելի կրթված ճաշակով պնդա-
ւորութեան և զանազան անվայել պիւրանքների
կողմից. ինչ անենք, որ մեր մատաղ կրթված
սերունդը նոյն պնդասէր ծնողների զիջելու առ-
նալով, նոյն հասարակութեան մէջ մտնելով
դառնում է նոյնը, ինչ որ նրա նախորդներն են
եղել: Ահա պարզ է, որ թէպէտ այս շարիքը
անկրթութենից է առաջ եկած, բայց մեր մա-
տաղ կրթված սերունդն էլ ապագայում սակաւ
կարգաբանք մեր նրա վրա դրած յոյսերը:

Եւ այս ախար օրից օր աւելի և աւելի ար-
մատանալով ժողովրդի մէջ իր յետեցի բա-
ցում է նրա համար երկու մեծամեծ կորստի ան-
գունդներ, որոնք են աղքատների բաշմանալը
և ամուսնութեան սակաւութիւնը: Մի կողմից
ընտանեկան չուայութիւնը սպառում է մար-
դու ձեռքին ունեցած վերջին կօպէկի և յետին
աղքատութեան հասցում, միւս կողմից երկուս-
տարեցները վախճալով այսպիսի չուայ կենսի
ծանրութիւններից հրաժարում են ամուսնական
կենսեցից, և չատերը նրանցից ենթարկվելով զա-
նազան երկուստարեկան ախտերի տարածման
մոտում են գերեզման, և կամ իրենց թրամ ոյժերը
կորցնելուց յետոյ, ուշ ամուսնանալով՝ ունենում
են թող և հիւանդաւ դաւանքներ:

Ուրեմն մեզ պէտք է վաղօրօք այս չարիքի
առաջն առնելու և մեր հասարակութիւնը նրա
հետեւանքների աղբիւրներից ազատ պահելու
համար կրթել նոյն իսկ հասարակութիւնը, այ-
սինքն բանալ նրա միտքը, հասկացնել նրան այս-
պիսի մոլի սովորութիւնների վնասակարութիւնը,

Բ.

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Վերին-Աղուլիս, 8 հոկտ.

Օրիորդաց ուսումնարանի գալիւնում յօգուտ
«Արարատեան ընկերութեան» մեր տունը երկու
ներկայացուցիչներից եկամուտ գոյացաւ 118 բոլոր
71 կօպ. որից դուրս գալով 42 բոլոր 76 կօպ.
մեր արած զանազան ծախսերի համար կը մնայ
75 բ 45 կօպ. յօգուտ ընկերութեան:

Ինձ յանձնված լինելով այդ գումարը իմ ըն-
կեր թատրոնասէրներից, ուղարկում եմ ձեզ պա-
տուելի պարտի, ինչպիսիք ձեզ հասցնել նրան ուր
հարկն է:

Գողթնեցի

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Հոկտեմբերի 17-ին, ժամի 5-ին կէսօրից յե-
տոյ, Նորին Կայսերական Բարձրութիւն Կովկա-
սեան Փոխարքան իր Օգոստոսական Ընտանիքով
և իր Գասեր փեսացուի, Մէկլինբուրգ Շվեդի-
նեան դուքսի հետ վերադարձան Թիֆլիս: Բար-
ձր աստիճանաւորները, քաղաքագլուխը և քա-
ղաքային ուղարկայի և դուսայի անդամները,
նոյնպէս և Թիֆլիսի նահանգի աշխուստեւո-
թեան ներկայացուցիչները հանդիպեցին Օգոս-
տոսական անձանց երկաթուղու կայարանում:
Քաղաքը զրօշակներով էր զարդարված, իսկ
երկայեան լուսաւորված էր:

Ներկ ուղարկեցինք Կ. Պօլիս «Արարատեան
ընկերութեան» անունով մեր խմբագրութեան
մէջ նուիրատուութիւններով հաւաքված 2000 բոլոր
գումարը: Բացի այդ գումարից խմբագրութեան
մէջ կայ դարձեալ 365 բ. 47 կօպէկ, որից հա-
նելով 6 բ. 65 կօպէկ փօստի ծախսը վերև յիշված
երկու հազար բոլոր ուղարկելու համար, մնաց
«Մշակի» խմբագրութեան մէջ 368 բ. 82 կօպ:

Մեզ պատմում են հետեւալ անցքը: Նորերում
Թիֆլիսի քարվանսարանից մինի մէջ երեսու-
ցի Մ. սենեակի ընկեր է լինում մի երեսուցի
ոսկերչի հետ: Մ. գիշեր ժամանակ գաղտնի վեր
է առնում ոսկերչից մի մատանի 70 բոլորի
արժողութեամբ: Ոսկերչը հարցնում է նրա-
նից, բայց նա ուրանում է իր արածը: Նրբ
որ ոսկերչը վկայներով հաստատեց թէ մատա-
նին իրանն է, Մ. հաւատացնել է սկսում որ այդ
մատանին պ. Զ-ից ընծայ է տացել, բայց վեր-
ջապէս ստիպված է լինում յետ դարձնել մա-
տանին իր տիրոջ: Պատմում են որ նոյն երկուս-
տարը Մ. նորերում մի գիմնադրայի գրպանից
25 բոլոր է հանել:

Պ. Տ. Տէր-Գրիգորեանը Նիժնի-Նովո-
րոյից ուղարկեց մեզ քանի բոլոր հետեւալ
նամակի հետ. «Ուղարկում եմ ձեզ քանի բոլոր
ժողոված այստեղ բնակվող մի քանի հայ պա-
րոններից յօգուտ «Արարատեան ընկերութեան»:
Խնդրեմ բարեհաճէք այդ փողը հասցնել ուս
հարկն է:»

ԳԱՆՁԱԿԻՑ մեզ գրում են. «Հոկտեմբերի
12-ին դաւառապետի օգնական Մակաւաբեի մի
քանի ուրիշների հետ ճաշում է մի պարոնի
տանը: Զաչից յետոյ հիւրերը բերում են նոր
ձեռի հրացաններ և փորձում Հիւրերից մէկը
մուսնաւոր, որ հրացանը լցրած է արծաթով և
զաւառապետի օգնականի վրա: Գնտաղը գիպ-
չում է օգնականի կողքին: Նրբ օգնականը ընկ-
նում է, արծաթալիւզ էլ ուշաթափվում է: Ասում
են, որ վերքը վտանգաւոր է:»

Մեզ հաղորդում են ԳԱՆՁԱԿԻՑ միջերեւոյ
հետեւալ գնորդը. ալիւրի պուրը արժէ 1 բ. 20
կ., ցորենի թաղարը 35—44 բ., բրինձի պուրը
3 բ., հալած իւղը 15—18 բ., մսի ֆունտը 7 1/2
կ., խաղողիւրը 3 կ., պանիրը 15—20 կ.:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. ՊՈԼՍԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏՏ

Ներկ աղբային ժողովը գումարեցաւ ի Վա-
լթիւս ընդ նախագահութեամբ Ս. Պատ-
րիարք հօր և ատենապետութեամբ Սուսու-
ֆեան Եֆէնսիի:

Ներկ նախընթաց նիստերու ատենագրու-
թիւնները վաւերացուեցին յետոյ, ժողովն
անցաւ օրակարգի խնդրոց. և ըստ որում
դաստիարակութեան խնդրոյն համար վար-
չութիւնէն սպասուած տեղեկաւորն եկած
չէր, ժողովն առաջնութիւն տուաւ Հայկա-
կան խնդրոյն, և նախաքննիչ մասնաժողովին
տեղեկագիրը կարգացուցաւ: Մասնաժողովը
կը յայտարարէր թէ հայկական խնդրոյն վե-
րաբերեալ բոլոր գրութիւնները Ս. Պատ-
րիարքէն ստանալով մանրակրթութեան, պէտք
եղած բացատրութիւններն ստացելու է նո-
րին Սրբազնութիւնէն, և անոնց մէջ ոչ միայն
աղբային շահուց հակառակ եղող կամ կաս-
կածի տեղե տուող կէտ մը չէ նշմարել, այլ

ազգին բուն վերքը ցոյց տրուած և յոռի վարչութեան դէմ դառնապէս բողոքելով՝ Հայաստանի մէջ հայկական վարչութեան անհրաժեշտ ըլլալն ապացոյցներով հաստատուած տեսեր է: Մասնաժողովը խնդրոյն այս վերահր նկատելով, հարկ դատեր է Մեծ. Պէկեան էֆէնտիի քով եղած գրութիւններն ալ տեսնել, ինչպէս որ ինք և. նստին մէջ յայտարարած էր, որպէս զի եթէ անոնց մէջ կասկածի և շփոթութեան տեղի տուող բան մը տեսնէ, այն ատեն կարենայ խնդրոյն քննութիւն և ան և զան ալ ին և ժամ առ ժամ կրնա լրացնել յայտնել. բայց Պէկեան էֆէնտի չէ հաճեր իւր թղթերը ներկայացնել մասնաժողովին. որով մասնաժողովն ալ պարտաւորուել է այս մասին պէտք եղած տնօրէնութիւնն ազգային ժողովոյ թուով:

Տեղեկագրին ընթերցումէն յետոյ, իրաւամբ դիտողութիւն եղաւ թէ տեղեկագիրը թերի էր, քանի որ Պէկեան էֆէնտի իւր թղթերը չէր ներկայացուցեր. ուստի առաջարկեցաւ որ Պէկեան էֆէնտի իւր թղթերը մասնաժողովին ներկայացնելու հրաւիրուի Պէկեան էֆէնտի ընդդիմացաւ այս առաջարկութեան, և կուէր որ ժողովին մէջ կարգայ իւր թղթերն: Այս միջոցին ժողովին մէջ աղմուկ մը տրեց, բայց Ս. Պատրիարք հօր ջանքեր խաղաղութիւնը շուտով հաստատուեցաւ: Ս. Պատրիարք հայրն հրաման ըրաւ որ Պէկեան էֆէնտին անմիջապէս կարգայ իւր թղթերը, սակայն երեսօթականներէն ոմանք իրաւացի դիտողութիւններ ըրին թէ ոչ միայն մասնաժողովին արժանապատւութեանը դէմ էր այդ ընթերցումն, այլ և ժողովին որոշման ալ. վասն զի Պէկեան էֆէնտին Ս. Պատրիարքի մէջ ալ ուղեց այդ թղթերը կարգաւ, սակայն ժողովը Պէկեան էֆէնտիի յարուցած կասկածին վրա չընեւրեց այդ ընթերցումն, և խնդիր փոխանակ նախաձեռնով վերցնելու՝ նախաքննութեան յղեց: Ասոր դէմ առաջինքննի ոմանք յերեսօթականաց թէ ժողովը Ս. Պատրիարքին գրութիւնները միայն նախաքննել որոշած էր: Եթէ իրօք այնպէս ըլլար, մասնաժողովին տեղեկագիրը բաւական պէտք էր նկատուէր, և անոր առաջարկած վստահութեան և շնորհակալութեան քուէն տրուէր: Սակայն այսպէս չէր և չէր կրնար ըլլալ: Մասնաժողովն իրաւունք ունէր Պէկեան էֆէնտիի թղթերն ալ տեսնելու, ուստի երէկ ժողովը մեծամասնութեամբ որոշեց որ Պէկեան էֆէնտի ալ իւր թղթերը մասնաժողովին ներկայացնէ. և ատենան վերջացաւ ժամ 10-ին, յաջորդ նիստը 15 օրէն գումարելու պայմանաւ:

Կը յուսանք որ Պէկեան էֆէնտի ժողովին այս նոր որոշումը յարգելով իւր թղթերը կը ներկայացնէ մասնաժողովին: Եթէ երկուշաբթի որ թղթերը կը կորսուին ինչպէս երէկ յատենի ժողովին յայտարարեց, կրնայ ինք անոնց օրինակներն առնուլ. և իւր ստորագրութեամբը վստահացնելով՝ պատճէններն յանձնել մասնաժողովին, և ընտրելին իւր քով պահել:

(Մասին)

ՏԵՂԵԿԱԳՐԻՆԵՐ ԿԱՐԻՆԵՐ

Կարինէն սեպտ. 2 թուով գրված նամակի մը մէջ հետեւեալ տողերը կը կարդանք. «Երես քաջուած հեռագրերէն լսած էք քաղաքիս մէջ պատահած յուզումները. ես ալ համառօտիւ մը նկարագրեմ: «Օգոստ. 30-ին գիշերը չորս հինգ թուրք Վեօմբուկին ետեւ խեղճ և աղքատ Աշիի Հայու մը տուն մտնելով զինքը կը վերադարձնէ, տունը կը կողոպտեն և կինը բռնութեամբ և անխելճ կերպիւ կը բռնաբարեն. ուրիշ տուն մը մտնելու համար ալ դռները կը կոտրեն,

դրացիք աղաղակներէն արթննալով բռնաբարող թուրքերէն երկուքը կը բռնեն և անմիջապէս Ռուսաց կառավարութեան կը յանձնեն. միւս ընկերք կը փնտովնու հետեւալ առաւօտ այս լուրը քաղաքին մէջ տարածուելով՝ Հայերը կրպակներն կը գոցեն և առաջնորդարանի չորս կողմը խռնելով օգնութիւն և ապահովութիւն աղաղակել սկսան. նոյն միջոցին ուրիշ Հայ տղայ մը Խասապխանէի մ' առջև մահացու կերպիւ զարնուեցաւ. տաճիկը սկսան դարձեալ սերքը օր մնացը ըսելով սպառնալ. ժողովուրդն յուզումները չարիազանք էր. ամբօխը մօտ 3-4000-ի հասնելով՝ դիմեցին Ռուսաց կառավարութեան և Գաղտնական հիւսիսային, որը ժողովուրդը ի հանդարտութիւն հրահրելով՝ անմիջապէս հեռագրեցին հարկ եղած տեղերը, ազգն ալ Պատրիարքարան և դեսպանաց հեռագրեց. նոյն օրն և հետեւեալ օրը մինչև ցերեկ խանութները չը բացուեցան, բայց վերջապէս աղբայնոց համաձայն ջանքի շնորհիւ երէկ իրիկունէն ի վեր հանդարտութիւնը տրեց, այսօր ալ հանդարտ է քաղաքը. ժողովուրդը թուրքաց սպանալիքներէն վախկնալով կը կասկածին թէ Ռուսաց քաջաւիճ յետոյ թուրքերը մեծ գէշութիւններ ընել կը սկսին Հայոց. ասոր համար կինաց և ընչեց ապահովութիւն միայն կը ինքնաբեր. տեսնելք թէ վերջերս ուր պիտի յանգնի. յոյս ունիմք որ այս շարժումն ստիպէ Օսմ. կառավարութիւնը ժողովուրդն ապահովութեանը համար խիստ միջոցներ ձեռք առնելու, և թերեւս վստացուած անտեղութիւնը չը պիտի պատահին Ռուսաց մեկնելէն յետոյ:

(Մասին)

ՆԱՄԱԿ ԹԻՒՐԿԻԱՅԻՅ

վան, 18 սեպտեմբերի

Այնչափ մեծ եռանդով և անաչին պատրաստութեամբ գումարուած կանգնուի կնքած նըշանաւոր դաշնագիրին վրայ, մինչ իւր երեք ամիս անցեր է, թերեւս ժողովը կը կարծեն որ Հայաստանի վիճակն գէթ մինչև մէկ աստիճան բարեփոխուած է: Սակայն մեք որ Հայաստանի կենտրոն վասպուրական կը բնակվիք, ցաւ ի սիրտ ստիպուած ենք ասել որ ամենաթեթեւ փոփոխութիւն մը անգամ տեղի ունեցած չէ դէպի լաւ, այլ դեռ նոյն ցաւալի դրութեան մէջ է և նեղակեցնող կը վատթարանայ, ինչպէս որ կերելի. և որպէս զի մեր խօսքեր աւելի հաստատուն համարուին, մասնաւորապէս վասպուրականի վրայ խօսվիք, ուր բնակած լինելով ամեն բանին ակնաստեպ եմք:

Ահա թէ ինչ է Հայաստանի վիճակն Բերլինի դաշնագրէն ետք:

Վերջին Արեւելեան պատերազմին երեսն միշտ դեռ շատ քրիստոնէայ ազգեր շնորհիւ Ամենաողորմած Կայսեր Ռուսոյ ազատեցան թուրքաց լծից, և Հայերն ալ փափագեցան ազատութեան, բայց չը յաջողեցան. այժմ տեղւոյս կառավարութիւնն և թուրք ժողովուրդն աւելի խստացեր են հայոց դէմ և ամեն առիթով մէջ թշնամութիւն կանեն հանդիմանելով և սպառնալիք, որոյ հետ կցեր են բոլորովին աչք գոցել Հայոց կրած նեղութեանց վրայ: Մինչև ցարդ կառավարութիւնն գէթ ի վերին երես Հայոց ազգ իւր հաւատարիմ հպատակ կանուանէր, իսկ այսուհետ բացէ ի բաց կատէ երգիծանելով, և ալ ամենին չուզեր զթալ նոցա աղետից:

Անցեալ տարուան ամառէն սկսեալ կառավարութիւնն անորոշ դրութեան մէջ էր այստեղ, զի կը կասկածէր թէ վան կառնուի բռնութիւն, Սյամ երբայդ վան չը կայ, նորէն իւր առաջին զիրք բռնէր է: Եւ մինչ քրիտոնք վանայ հարաւային գաւառներու բոլոր Հայերն անասելի հարստահարութիւններով իրենց ինչքն և կալուածներն թողնել և գաղթել ստիպեցին իւր 4 ամիս մէջ, կառավարութիւնն ալ կաշխատի քաղաքի ժողովուրդը նոյն վիճակին ենթարկել, այսինքն Հայեր ցրուել վանէն և թուրքերն անհեշտ, Հաստատ կերպով իմացուեցաւ որ օր մը առաջնորդ սրբազանն երբ կուսակալի ուշադրութիւնն գաղթականութեանց վրայ կը հրա-

ւիրէ, ինդրելով որ նոցա առաջին առնուլ բարեհաճի, նա յայտնապէս կը պատասխանէ թէ «ինչ անհի, կը գաղթեն, իրենք գիտեն, մեզ թնջեալ կը լինի նոցա գաղթելէն»: Այս խօսքերը երբ նոյն իսկ կուսակալն բերնէն կը լսին, դուրաւ դուրսկել կը տան թէ կառավարութիւն կը բազմայ որ վանայ մէջ քիչ Հայ մնայ, զի մի գուցէ օր մը լուսնի պատահի Հայոց երեսնէն: Կուսակալն պատերազմէն առաջ և վերջն ալ միջոց մը շատ աղէկ կէրէք, բայց հիմայ կօնգրէի Հայոց խնդիր չընդունելուն վրայ սաստիկ դաժանացած է և երբեք չը հոգար Հայոց համար: Լուր տարածուեցաւ թէ Վ. Պոլսէն հրահանգ հասած է մասնաւորապէս ճնշել զՀայեր որ ուրիշ անգամ ազգային գոյութեան ձեռք տուի չունենան: Այլ մը անգամ ընդ միշտ ճնշուած միան ստիպել տառապանաց ներքեւ:

Կառավարութեան ամեն առեաններն նախ հայ անդամաց ներկայութիւնն և ոչ ոք որոշմանց համար նոցա հաւանութիւնն անհրաժեշտ կը համարէին, իսկ այժմ երեք կարեւորութիւն չեն տայ ոչ ներկայութեան ոչ հաւանութեան: Եւ բաթ մը առաջ երկու թուրք պաշտօնեայ առաւանձին ամէն հայոց տարեկան վստասկ նշանակեցին, որ «թէմէթթօ» (շաւառ առթիւ) ըսված տուրքն պահանջին: Թող զայն, որ պէտք էր Հայ պաշտօնեայ ալ միասին ունենալ, սոսկալի անգթութեամբ ամէն Հայոց վստասկն ալ շատ դրեցին, օրինակի համար, որոնց որ նախորդ տարի 300 դրուէ էր 1000—1200 դրուէ նշանակեցին և այլն: Այս տարի Այգեստանի արմատաց տասանորդն ալ ուժեղացաւ գրեցին: Իսկ գիւղերու արմատաց (ցորեն և այլն) տասանորդն ոսկի դրամով ծախեցին, որ է թղթագրամի եռապատիկ: Թղթագրամի դր կառավարութեան պարտքն է բարձր պահել, կառավարութիւնն կաշխատի հեռագրեւ կոտորել նորա յարգ, վասն զի ինքն երեք ամիսէ հետէ սկսած է մետաղէ դրամով գնել և դրաց տալ: 100-նոց թղթագրամն այս շաբաթ 57 դրուէ գնեց և 100-էն դրաց տուաւ: Թշուառ զօրքերն այս անգթութեան փոխարէն Հայերէն վրէժ կը լուծին, զի կամ թղթագրամն իրենց առած գնով կուզին տալ և կամ ապրանքի մը կէս զին վճարելով կը տանին ստիպմամբ առանց տիրով հաւանութեան: Բաց անտի կառավարութիւնն վանայ ենթակայ Վէլէն, Պաշկալան, Մոկու և Կավաշ գաւառաց մէջ տուրքի տեղ թղթագրամ կառնուր, այլ արժաթ դրամ կը պահանջէ, որ ինչպէս ասինք եռապատիկն է: Յիշեալ տեղերու հայ բնակիչներն քանիցս եկան քաղաք բողոքեցին: Կուսակալն հրամանագիր տուաւ նոցա որ թղթագրամ տալ կարենան բայց ծածկապէս զրից յիշեալ գաւառաց տեղակալներուն (գլխաւորաւ) որ ընդդիմանան և չառնուն թղթագրամն Բնակիչներն երբ իմացան այս ծածկի դրուէն, ստիպուեցան բողոքելէ ետ կենալ: Եւ այս բան կրնէ կուսակալն որպէս զի իւր ամառականներն (50000 դրուէ) ոսկի դրամով ստանայ յիշեալ գաւառներէն փոխանակ թղթագրամի:

Այս միջոցներ բոլորովին դադրած են Հայեր կառավարութեան բողոքելէ ոչ և քանի համար վանն զի կատարելապէս համոզուած են որ բողոքելն օգուտ չընեն, այլ ընդհակառակն ժամանակի և դրամի կորուստ միայն կը պատճառէ:

Քիչ օր առաջ հինգ մարդու (աւելորդ է ասել Հայու) Քրտերէն սպանուել լսեցինք. իսկ կուղպուեցին ալ ևս հարստահարութիւն չը համարուին այստեղ, զի կորուած է իւր նշանակութիւնն անվերջ յաճախութեանց պատճառաւ:

Առաջնորդարանէն ոչալի թա գրիւր գրուեցաւ Գուրը, ամէնն ալ անպատասխանի մնացին: Ուստի նա ալ յուսահատած է այժմ, որով օրերով առաջնորդարանն զոց կը մնայ: Հայ պաշտօնեայ կառավարութեան մէջ զանազան հեղինական անուաններով կը ծաղրուեն, որոնց շատն նոյն իսկ կուսակալն հնարեր է և դերասանի պէս կը ներկայացնէ նոցա բնական չարժեքներն և կը ծաղրէ չարաչար. կառավարութեան պաշտօնեայ բոլորն ալ կը խրկին գեղերէն ձրեպէս յարգ և խոտ կը բերին իրենց անամոց համար: Գեղացիք բողոքել անգամ չեն համաձայնիր: Գիտեն որ օգուտի տեղ մնայի կը պատահին:

Ահաւասիկ Բերլինի դաշնագիրն այս կերպով երեք նշանակութիւնն չունի: Օսմանեան կառավարութեան առաջ, Ահա զթաւիրոյ (?) Եւրոպան այսպէս հոգաց նախ խեղճ Հայոց ազգ, որ բնաւ յանցանք չունէր Եւրոպայի կողմէն այս օրինակ անուշադրութեան մատուցելու արժանի:

Արդեօք պիտի չը լինի երբեք մեզ փրկու-

թիւն, և միշտ այս խեղճութեանց մէջ պիտի կենանք: Միթէ մայ է մարդասէր և քաղաքակիրթ Եւրոպայի կամք. քաւ լիցի, թէ այս լինի: Սմբատ

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Արտաքին» մէջ կարգումներ «Արտոյ Հայոց գաղթականութեան առաջն առնելու համար Ս. Պատրիարք հօր առ Բ. Գուրն ուղղած ազգու թաքրիրներն ի պատասխան այս չարքու Բ. Գուրնն պաշտօնագիր մ'եկաւ Պատրիարքարան և կը ծանուցանէ թէ «Ռուսաց բանակին կարինէն մեկնելէն յետոյ Քրդաց և այլոց կողմէ Հայոց չարքը չը հասնելու համար Ս. Պատրիարքին խորհրդածութեանց համաձայն հարկ եղաւ հրամանները զրկուելէ գառ» ուրիշ տնօրէնութիւնը ալ եղած, և հետեւաբար վտանգին առաջն առնուած է: Գոհ ենք որ Բ. Գուրնն այսպէս արժան եղած միջոցները տնօրինելով վտանգին առաջն առած է, բայց կարծենք՝ աւելի կըլլար եթէ ձեռք առնուած միջոցներն ալ ծանուցելէն որպէս զի անոնց գործադրութիւնը, կարող, ձեռնհաս, ազատամիտ և անապառ անձանց յանձնուած ըլլալ տեսնուէր՝ յանդրութիւնն սրտի Հայ ժողովուրդաց: Բ. Գուրն վերոյիշեալ պատասխանագիրը պաշտօնական հերքում է թուրք լրագրաց ոմանց այն անտեղի յայտարարութեան թէ Կարնոյ Հայերը գոհ են իրենց վիճակէն, թէ ամեն ապահովութիւնն ու անդորութիւնն վայելած են և կը վայելեն և թէ գաղթելու բնաւ միտում ունին և այլն: Եթէ այնպէս ըլլաւ, Բ. Գուրն իւր պաշտօնագրով չէր ծանուցանէր թէ վտանգին առաջն առնուած է: Կը լսենք թէ Անգղիայէն վերջին թղթագրերով Ս. Պատրիարք հայրը նամակ մ'ստացեր է Լորտ Դաթիւրզլըրիէն: Սոյն նամակով յիշեալ աղիւս Լորտը կը յայտնէ Ս. Պատրիարք հօր թէ Հայոց վիճակին բարւոյն համար իւր ձեռքէն եկած ջանքն ընելէ չը պիտի դադրի:

«Բէյութի ընկերութեանը» հաղորդում են որ սուլթանը Բեկեր-փաշային իւր ազիտանդ է նշանակել: Կ. Պոլսի պաշտպանողական գծի հրամանատարին յանձնած է վերջացնել մարաքաղաքի պաշտպանութեան համար հարկաւոր եղած աշխատանքները:

ՄԵՄԵԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐՈՒԹԻ, 18 հոկտեմբերի: Պետական բանկի 50% տոմսը առաջին շրջանի արժէ 96 ռ. 75 Կ., երկրորդ 95 ռ. 50 Կ., երրորդ 95 ռ. 50 Կ., չորրորդ 95 ռ. 62 Կ., ներքին 50% առաջին փոխառութեան տոմսը արժէ 235 ռ. 25 Կ., երկրորդ 229 ռ. 50 Կ., տրեւելան 92 ռ. 65 Կ., ոսկի 8 ռ. 24 Կ.: Ռուսաց Լուրը Լօնդօնի վրա արժէ 24 պէնս, Ռուսաց 100 ռուբլ Գերմանիայի վրա արժէ 204 մարկ 50 Ֆէնիք, Փարիզի վրա 251 Ֆրանկ 85 սանտ.: Կովկասեան կերօսինը պուղը 3 ռ. 35 Կ.: Տրամադրութիւնը ամուր է:

ՓԱՐԻՋ, 14/26 հոկտեմբերի: Տարածում են համարում այն լուրը, իբր թէ կոմս Շուլցովի յանձնվելու է իշխան Գորչակովի պաշտօնը:

ԲՈՒԽԱՐԵՍ, 15/27 հոկտեմբերի: Մի օրէնք է հրատարակված, որ ի նկատի առնելով Գորբուշայի կառավարութեան ընդունելը, մէկ միջոց կրեգիտ է բացվում:

ԼՕՆԴՈՆ, 18/30 հոկտեմբերի: Այսօր կը կայանայ միւնիստրների խորհուրդի նիստ: «Daily News» լրագրին Սիւնայից հեռագրում են. «Երիտմանական կառավարութիւնը վճռեց դիմել Էմիրին մի նամակով, որով պէտք է որոշ կերպով բացատրվեն նրան բրիտանական զեւականութեան չընդունելու հետեւանքները: Զօլաւձուէ յն. խանն որ նոր ուղեորովեցաւ Սիւնայից, իր հետ տարաւ այդ պաշտօնագիրը: Պատերազմական պատրաստութիւնները դարձեալ տեսնուում են»:

